դրամը, հետևաբար Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 100 000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

***4. <u>Վճռի օրինական ուժի մեջ մտնելը</u>.***

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.12-րդ հոդվածի 1-ին մասի՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:*

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռն, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

**IV**

**(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)**

*Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը*

## Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՖԱՍԹ ԲԻԼԴ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի 21.04.2023 թվականի ծանուցմամբ <<08.07.2022 թվականին կնքված թիվ ԱՄԽՀ-ԳՀԱՊՁԲ-22/11-2 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին>> որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցը բավարարել.

1.1. անվավեր ճանաչել ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի 21.04.2023 թվականի ծանուցմամբ <<08.07.2022 թվականին կնքված թիվ ԱՄԽՀ-ԳՀԱՊՁԲ-22/11-2 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին>> որոշումը:

2. ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքից հօգուտ <<ՖԱՍԹ ԲԻԼԴ>> ՍՊԸ-ի բռնագանձել 30 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքից հօգուտ <<ՖԱՍԹ ԲԻԼԴ>> ՍՊԸ-ի բռնագանձել 100 000.00 ՀՀ դրամ փաստաբանի վարձատության գումարը:

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

5. **Վճռի <<եզրափակիչ>> մասի 1.2., 2. և 3. կետերը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին**:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

**ԴԱՏԱՎՈՐ՝** Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192 Date: 2023.07.10 16:41:31 AMT **Ա. ՕՀԱՆՅԱՆ**